

վիճակը. նորագոյն շրջանի եկեղեցի մը կառուցուած էր վաղեմի սրբավայրի մը վրայ. մէջտեղ ելած հնութիւններուն մէջ կը գըտնուէին յոյն, լատին և արաբական զիրերով արձանագրութիւններ, բիւզանդական և լատին տիրապետութեան վերաբերեալ գերեզմաններ և դրամներ:

Անակնկալ գիւտ մ'էր երևան ելածը. պեղումներու խորացումը մէջտեղ բերաւ երկու եկեղեցիներու աւերակներու իրարու վրայ կուտակումը. ստորին եկեղեցիին յատակագիծը կը նայէր նարաւային արեմուտքէն հիւսիսային արեւելք, Երուսաղէմի հին տաճարին կողմը ուղղուած: Բայց վրայի եկեղեցիին ուղղութիւնը կատարելապէս Արեւելք կը նայէր, այնպէս որ նախապէս շինուած եկեղեցիին հետ ճշգիւ համադիր չէր: Փրանչիսկեանք այս պեղումներէն յետոյ նոյն աւերակներու տեղւոյն վրայ շինեցին նոր և շքեղ եկեղեցի մը:

Մենք այս տողերով պիտի ջանանք նկարագրել մեր Փրկչին վերջին գիշերը Գեթսեմանիին մէջ աղօթած տեղւոյն վրայ, իր մասնութեան և ոլոռն ոլոռն թափած իր արիւն-քրտինքի կայլակներուն ի յիշատակ շինուած եկեղեցիներուն պատմական փոփոխութիւնները այլ և այլ դարերու մէջ, և ապա որոշ ապացոյցով մը պատմել թէ այն Ընթրնան կամ Աղօթքի եկեղեցին ո՞ր դարուն Հայոց սեպհականութիւն դարձած է և մինչև ե՞րբ Հայք տիրացած են անոր:

## 1. Քրիստոսի Ըմբռնման եկեղեցին սկիզբէն մինչև 614.

Այս եկեղեցին օտար եկեղեցական մատենագրութեան մէջ կը կոչուի Օրհնախ եկեղեցի, Աղօթքի եկեղեցի, Փրկչի եկեղեցի. իսկ մենք ընտրեցինք Ըմբռնան եկեղեցի անունը, նկատելով որ մեր Փրկիչը նոյն տեղին վրայ կալանաւորուած ու իբր մահապարտ տարած են դատաւորին, և սա պատճառաւ ալ որ մեր Հաննէ եւ պիսկոպոսը Քրիստոսի ըմբռնման տեղւոյն մօտ գտնուած այր մը իր Պատմութեան մէջ կը կոչէ Այր Ըմբռնան:

Մենք մեր առաջին վկայութիւնը կը բերենք Կիւրեղ Երուսաղէմացիէն, որ 347 թուականին իր Կոչումն ընծայութեան գիրքին մէջ (Ճառ Ժ) աւետարանական ճշմարտութեան վկայ կը բե-